«ՓՈՔՐ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/17/19

ք. Երևան «08» 05 2020թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն **Արթուր Սողոմոնյանի**, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ **Պատվիրատու**), մի կողմից, և ՋԻՆՋ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Էդուարդ Մեսրոպյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ **Կատարող**), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«ՓՈՔՐ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին՝ ներառյալ նախագծման առաջադրանքին, համապատասխան և սահմանված ժամկետներում:

1.3 Սույն պայմանագրի 2.4.4 կետով սահմանված համաձայնեցումները և դրանց արդյունքում առաջացած հավելյալ աշխատանքները չեն նախատեսում պայմանագրով սահմանված ժամկետի փոփոխություն:

1.4 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ժամկետը կարող է փոփոխվել միայն նախագծման առաջադրանքի փոփոխման դեպքում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.1.4 Ընդունել կամ չընդունել Պայանագրի 2.4.5 կետով առաջադրվող մասնագետի թեկնածությունը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3 **Նախագիծը գրավոր համաձայնեցնել «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի հետ:**

2.2.4 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին տրամադրել տեխնիկական բնութագրում նշված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը, ջրամատակարարման տեխնիկական պայմանները և ջրօգտագործման թույլտվությունը (ըստ անհրաժեշտության):

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային լուծումները՝ ներառյալ աշխատանքային ծավալները, գրավոր համաձայնեցնել «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի, համայնքի, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ նախագծման ընթացքում, նվազագույնը երկու անգամ:

2.4.5 Արտակարգ կամ չնախատեսված հանգամանքների ի հայտ գալու դեպքում Պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար Հավելված 4-ում ներկայացված մասնագետների փոփոխության դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին: Ընդ որում, առաջադրվող մասնագետի որակավորումը և աշխատանքային փորձը պետք է լինի համարժեք կամ առավել փոխարինվող մասնագետի որակավորումից և աշխատանքային փորձից:

2.4.6 Նախագծի փորձաքննությունն իրականացնելու նպատակով, սույն պայմանագրի 3.1 կետին համապատասխան ծառայության արդյունքը հանձնելիս, Պատվիրատուին տրամադրել նախագծման բոլոր գրքերի երկուական թղթային օրինակ հայերեն լեզվով (ինչպես նաև էլեկտրոնային՝ AutoCAD, Word, Excel և PDF տարբերակով), իսկ փորձաքննության ավատից հետո Պատվիրատուին տրամադրել նաև տեխնիկական բնութագրում նշված մնացած քանակները:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.1.1 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն ծառայության արդյունքը ներկայացնում է փորձաքննության: Եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն **15 աշխատանքային օրվա**

ընթացքում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և բացասական եզրակացությունը՝ ծառայության արդյունքի շտկման նպատակով: Կատարողը **Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում** շտկում է վերոնշյալ անհամապատասխանությունները և ծառայության արդյունքի շտկված տարբերակը ներկայացնում Պատվիրատուին պայմանագրի 3.1 կետով սահմանված կարգով, որից հետո Պատվիրատուն ծառայության արդյունքը ներկայացնում է փորձաքննության:

3.1.2 Փորձաքննության արդյունքում փորձաքննողի կողմից տրամադրվում է դրական կամ բացասական եզրակացություն, որը Պատվիրատուն տրամադրում է Կատարողին: Պատվիրատուն, փորձաքննության բացասական եզրակացություն ստանալու դեպքում, **10 աշխատանքային օրվա** ընթացքում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և փորձաքննության բացասական եզրակացությունը՝ ծառայության արդյունքի շտկման նպատակով: Կատարողը **Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում** շտկում է վերոնշյալ անհամապատասխանությունները և ծառայության արդյունքի շտկված տարբերակը ներկայացնում Պատվիրատուին պայմանագրի 3.1 կետով սահմանված կարգով, ինչպես նաև Փորձաքննողին: **Փորձաքննության բացասական եզրակացության հետևանքով նախագծի կրկնակի փորձաքննությունն ապահովում է Կատարողը:**

3.1.3 Ընդ որում, փորձաքննության բացասական եզրակացության դեպքում Կատարողը իր առարկությունները և հիմնավորումները կարող է գրավոր ներկայացնել Փորձաքննողին և Պատվիրատուին: Փորձաքննողի կողմից Կատարողի հիմնավորումների բոլոր կետերի ընդունելու և վերջնական դրական եզրակացություն տալու դեպքում Կատարողի նկատմամբ չի կիրառվում սույն պայմանագրի 5.3 կետի «բ» ենթակետով սահմանված տույժը:

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն փորձաքննության դրական եզրակացությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **30 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը, դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը և փորձաքննության դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **Ընդհանուր 9,780,000 ՀՀ դրամ, որից Զափաբաժին 1-ինի համար 8,136,000 (ութ միլիոն մեկ հարյուր երեսունվեց հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն և Զափաբաժին 3-րդի համար 1,644,000 (մեկ միլիոն վեց հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու և **3.1 կետով** սահմանված յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի, **բայց ոչ ավել քան պայմանագրի գնի 10 (տասը) տոկոսի չափով:**[22] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, բայց ոչ ավել քան պայմանագրի գնի 10 (տասը) տոկոսը, հետևյալ դեպքերում և ժամկետներում՝

ա) Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետ. սույն պարագայում ուշացված աշխատանքային օրերի քանակը որոշվում է՝ համաձայն Պատվիրատուի կողմից ծառայության արդյունքի շտկված տարբերակը ընդունելու փաստը ֆիքսող 3.1.1 կետում նշված գրության,

բ) Փորձաքննության ժամկետ. տվյալ դեպքում տույժի վճարման սկզբնաժամկետ է համարվում 3.1.2 կետում նշված փորձաքննության բացասական եզրակացությունը Պատվիրատուի կողմից Կատարողին 3.1.2 կետով սահմանված կարգով տրամադրելու հաջորդող աշխատանքային օրը, իսկ ուշացված աշխատանքային օրերի քանակը որոշվում է՝ համաձայն պայմանագրի 3.2 կետով սահմանված՝ Պատվիրատուի կողմից ստորագրվող եզրակացության:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծանախահաշվային բացթողումների հետևանքով շեղումներ առաջանալու դեպքում, նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստից ելնելով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.4.2 Սույն պայմանագրի 5.4.1 կետով սահմանված շեղումներից բացառություն են հանդիսանում գոյություն ունեցող ստորգետնյա կոմունիկացիաների հետևանքով առաջացող շեղումները, որոնք հայտնի չեն եղել կամ չեն մատնանշվել ինժեներական ցանցերը շահագործող և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ համաձայնեցման պահին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են

---

[22] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպառնալիք պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	ՋԻՆՋ ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Զոլակյան փող., տ. 38
ՀՎՀՀ՝00846441	ՀՎՀՀ՝ 02511015
Հ/Հ՝ 900018007519	Հ/հ՝ 217004044111001
Կենտրոնական գանձապետարան	Բանկ՝ էյչ-էս-Բի-Սի բանկ Հայաստան ՓԲԸ
Գործադիր տնօրեն	Տնօրեն
Արթուր Մոմոնյան	Էդուարդ Մեսրոպյան
/Ստորագրություն/	/Ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել օրենսդրությունը չհակասող դրույթներ:

«08» 05 Հավելված N 1
2020թ. կնքված
ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/17/19 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության								
Հ/հ	ԳՄԱ ծածկագիր՝ CPV	անվանումը	տեխնիկական բնութագիրը*	չափման միավորը	ընդհանուր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
							հասցեն	ժամկետը
1	71241200/13	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում	«Փոքր Վեդի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայություններ	դրամ	8,136,000	1	ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցի 31	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 115 օր
3	71241200/16	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում	«Սարահարթ համայնքի խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում» աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայություններ	դրամ	1,644,000	1	ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցի 31	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60 օր

* Կից ներկայացվում է տեխնիկական բնութագիր (նախագծման առաջադրանքը)՝ Հավելված 1.1-ը:

Սույն ծառայությունների մատուցման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները.
ըստ «**Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակում**» հետևյալ ոլորտների՝

Չափաբաժինների համարները	Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները)՝ ենթադիրը(ները).
1	2
1,3	բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 9000180007519
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

ՋԻՆՋ ՍՊԸ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Չոլակյան փող., տ. 38
ՀՎՀՀ՝ 02511015
Հ/հ՝ 217004044111001
Բանկ՝ էյչ-էս-Բի-Սի բանկ Հայաստան ՓԲԸ
Տնօրեն
Էդուարդ Բաղրամյան

/ստորագրություն/

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ(ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

Օբյեկտ . Փոք Վեդի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում
Հասցե. Արարատի մարզ, գյուղ Փոք Վեդի

1.	Նախագծման հիմքը	ՀՀ կառավարության որոշում, 19 սեպտեմբերի 2019 թվականի N 1254-Ն, Փոք Վեդի համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման վերաբերյալ: Համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանք N 14 տրված 18.11.2019 թ.
2.	Պատվիրատու	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
3.	Նախագծման փուլ	Աշխատանքային նախագիծ
4.	**Ելակետային տվյալներ** • գոյություն ունեցող ջրմուղի ցանցի պատկանելիությունը հաստատող փաստաթուղթ	Փոք Վեդի համայնքի սեփականություն: Սեփականության վկայական 2367049, տրված 15.11.2010թ.: Շահագործվում է <Վեոլիա ջուր> ՓԲԸ-ի կողմից:
5.	Ինժեներագեոդեզիական և ինժեներաերկրաբանական հետազոտություն	Անհրաժեշտ է կատարել տեղանքի հանույթ և երկրաբանական հետազոտություն ըստ գործող նորմերի: Նշել գոյություն ունեցող ինժեներական ցանցերը, ոչ համայնքային պատկանելության տարածքներն ու կառույցները: Հանույթը համաձայնեցնել ինժեներական ցանցերը շահագործող և այլ շահագռգիռ կազմակերպությունների հետ: Ներկայացնել հենանիշերի (բենբ) ցուցակ:
6.	Կառույցի բնութագիրը եւ նախագծային լուծումներ	Գոյություն ունեցող ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է շուրջ 14.2 կմ: Գյուղ մտնող ջրի ելքը 20լ/վրկ է, ցանցում ճնշումը մոտ 15 մ է: Ծրագրով նախատեսվում է բաշխիչ ցանցի վերակառուցում:
7.	Կատարման ենթակա (նախատեսվող) աշխատանքների համառոտ բնութագիրը	
	Բաշխիչ ցանց	Նախատեսել համայնքի ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերակառուցում և ընդլայնում մոտ 14.5 կմ երկարությամբ: Տրամագծերն ընտրել ըստ հաշվարկի, հաշվի առնել թողունակությունը նաև հրդեհի դեպքում: Նախագծում ներառել տնային միացումների աշխատանքները՝ ներառյալ ջրաչափերի և ջրաչափական հորերի տեղադրման աշխատանքները:
8.	Տվյալներ ջրսպառողների մասին	Տրված է Փոք Վեդի գյուղի համայնքի

		ղեկավարի կողմից առ 12.11.2019թ. • բնակչության թիվը 3355 մարդ

Ավարտված նախագիծը ներկայացվում է պատվիրատուին ստորև ներկայացվող քանակություններով՝

Գիրք	Անվանում	Բովանդակություն	Քանակ	
			Հայերեն	Ռուսերեն
Գիրք-1	Բացատրական մաս	Բացատրագիր, հաշվարկներ, վերլուծություններ, բնապահպանական ռիսկերի նվազեցման միջոցառումների նկարագրություններ, ելակետային տվյալներ, Ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվություն), նախագծման առաջադրանք և այլն	6	1
Գիրք-2*	Գծագրական մաս	Աշխատանքային գծագրեր (ջրամատակարարման համակարգի սխեմա, գլխավոր հատակագիծ, ուղեգծերի հատակագծեր, երկայնական և լայնական կտրվածքներ, կառույցների և հանգույցների կոնստրուկտիվ լուծումներ, բարեկարգում): Տեղանքի հանույթներ (ուղեգծի հանույթ՝ Մ 1:1000, տարածքի հանույթ՝ Մ 1:500) , երկրաբանական հետազոտություն, տարածքի ուղղաձիգ հատակագծում: Չափագրական գծագրեր (հատակագծեր, կտրվածքներ, ներառել լուսանկարներ): Նախագծվող կառույցների հատակագծեր, կտրվածքներ, հատույթներ, հանգույցներ և այլն Մ 1-100, Մ 1-50, Մ 1-20 : Կոնստրուկտիվ տարրերի գծագրեր, մանրամասն և հավաք մասնագրեր և այլն:	6	1
Գիրք-3	Աշխատանքային ծավալների ամփոփագիր	Աշխատանքային ծավալների մանրամասն նկարագրումով, ծավալների քանակներով, միավոր և ընդհանրական գների դատարկ սյունակներով: 1.Ծավալաթերթ-նախահաշիվ, նշելով բոլոր ներառված աշխատանքների ծավալները և միավոր գները, ներառյալ բոլոր աննուղակի ծախսերը, բացի շահույթից և ԱԱՀ-ից: Շահույթը և ԱԱՀ-ն կիռարել ծավալաթերթ-նախահաշվի վերջում: 2.Մրցութային ծավալաթերթ՝ նույն ծավալաթերթ-նախահաշիվը առանց տողերի միավոր արժեքների, նշելով միայն յուրաքանչյուր գլխի կշիռը(%) ծավալաթերթի նկատմամբ:	6	1
Գիրք-4	Աշխատանքի կազմակերպում	Աշխատանքի կազմակերպման տեխնոլոգիական հիմնական պրոցեսների նկարագրությամբ, անհրաժեշտ մարդկային և մեքենա-մեխանիզմների քանակի գնահատմամբ, հիմնական աշխատանքի իրականացման օրացուցային գրաֆիկի կազմման, հենանիշերի աղյուսակներ, համաձայնեցումներ, օգտագործվող նյութերի	6	1

		և սարքավորումների տեխնիկական մասնագրեր ու նկարագրություններ և այլն:		
Գիրք-5	Նախահաշիվներ	Մանրամասն ըստ օբյեկտների նախահաշիվների կազմում՝ ☐ Ըստ գործող նորմերի	1	1

*Գիրք-2-ում հայերեն և ռուսերեն տարբերակները կարող են համատեղվել

Նախագծային փաստաթղթերի մշակման արդյունքում նախագծողը պետք է ներկայացնի նաև՝

- շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,
- Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,
- Աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,
- Նախագծային փաստաթղթերը պատվիրատուին հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային (AutoCAD, Word, Excel և PDF) տարբերակներով)

Նախագծի համաձայնեցումը

- Նախագծային լուծումները , ներառյալ աշխատանքային ծավալները, համաձայնեցնել «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի, համայնքի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հետ նախագծման ընթացքում նվազագույնը երկու անգամ:
- Նախագիծը համաձայնեցնել ինժեներական ցանցերը շահագործող և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ, ինչպես նաև այլ պետական լիազոր մարմինների (Շրջակա միջավայրի նախարարության, ԱԻՆ և այլն) հետ ըստ անհրաժեշտության:

Այլ պահանջներ

- Նախագծման ընթացքում, նախագծման առաջադրանքում կարող են մտցվել մասնակի փոփոխություններ և ճշտումներ:
- Նախագիծը փորձաքննության ներկայացնում է պատվիրատուն:
- Նախագիծը «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի հետ համաձայնեցնում է պատվիրատուն:
- Նախագծային փաստաթղթերը կընդունվեն պատվիրատուի կողմից միայն բոլոր անհրաժեշտ համաձայնեցումների և փորձաքննությունների դրական եզրակացության առկայության դեպքում:
- Նախագիծը պետք է համապատասխանի նախագծման առաջադրանքին ու ՀՀ տարածքում գործող շինարարական նախագծման նորմերին և կանոններին:
- Նախագծային փաստաթղթերը պետք է կազմվեն ՀՀ տարածքում գործող աշխատանքային գծագրերին ներկայացվող ստանդարտներին համապատասխան:
- Նախագծողի կողմից շինարարության սկզբի պահին պետք է կատարվի կառույցի նշահարումը և հանձնվի կապալառուին:

Նորմատիվ վկայակոչումներ

ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշում «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»:

ՍՆիՊ 2.04.02-84* Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառույցներ:

ՍՆիՊ 3.05.04-85* Ջրամատակարարման և կոյուղու արտաքին ցանցեր և կառուցվածքներ:

ՄՍՊ 4.01-101-2000 Ջրամատակարարման և կոյուղու համակարգերի պոլիմերային նյութերից խողովակաշարերի նախագծում և մոնտաժում. Ընդհանուր պահանջներ:

ՀՀՇՆ I-2.01-99 Ինժեներական հետազոտություններ շինարարության համար. Հիմնական դրույթներ:

ԳՕՍՏ 21.604-82 ՆՓՀՇ. Ջրամատակարարում և կոյուղի. Արտաքին ցանցեր. Աշխատանքային գծագրեր:

Բացի նշվածներից նաև օրենքով տվյալ գործունեությունը կարգավորող այլ օրենսդրական ու նորմատիվ փաստաթղթեր:

Օբյեկտ . <u>Սարահարթ համայնքի</u> «Խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում»

Հասցե. Լոռու մարզ, համայնք Սարահարթ

1.	Նախագծման հիմքը	ՀՀ կառավարության որոշում, 19 սեպտեմբերի 2019 թվականի N 1254-Ն, Սարահարթ համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման վերաբերյալ: Համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանք N 1 տրված 09.01.2020 թ.
2.	Պատվիրատու	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
3.	Նախագծման փուլ	Աշխատանքային նախագիծ
4.	**Ելակետային տվյալներ** • գոյություն ունեցող ջրմուղի ցանցի պատկանելիությունը հաստատող փաստաթուղթ	Սարահարթ համայնքի սեփականություն: Սարահարթ համայնքի կողմից 17.01.2020 թ. տրված տեղեկանք սեփականության իրավունքի վերաբերյալ: Շահագործվում է Սարահարթ համայնքի կողմից:
5.	Ինժեներագեոդեզիական և ինժեներաերկրաբանական հետազոտություն	Անհրաժեշտ է կատարել տեղանքի հանույթ և երկրաբանական հետազոտություն ըստ գործող նորմերի: Նշել գոյություն ունեցող ինժեներական ցանցերը, ոչ համայնքային պատկանելության տարածքներն ու կառույցները: Հանույթը համաձայնեցնել ինժեներական ցանցերը շահագործող և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ: Ներկայացնել հենանիշերի (репер) ցուցակ:
6.	Կառույցի բնութագիրը եւ նախագծային լուծումներ	Գոյություն ունեցող ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է շուրջ 5.2 կմ: Գյուղ մտնող ջրի ելքը 7լ/վրկ է: Ծրագրով նախատեսվում է բաշխիչ ցանցի վերակառուցում , ընդլայնում և ՕԿՋ-ի մասնակի վերանորոգում:
7.	Կատարման ենթակա (նախատեսվող) աշխատանքների համառոտ բնութագիրը	
	Բաշխիչ ցանց	Նախատեսել համայնքի ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերակառուցում և ընդլայնում մոտ 5.2 կմ երկարությամբ: Տրամագծերն ընտրել ըստ հաշվարկի, հաշվի առնել թողունակությունը նաև հրդեհի դեպքում: Նախագծում ներառել տնային միացումների աշխատանքները՝ ներառյալ ջրաչափական հորերի տեղադրման աշխատանքները:
8.	ՕԿՋ	Նախատեսել ՕԿՋ-ների վերանորոգում
9.	Վարակազերծում	Նախատեսել քլորացման սարքավորում
10.	Տվյալներ ջրսպառողների մասին	Տրված է Սարահարթ համայնքի ղեկավարի կողմից առ 10.01.2020թ. • բնակչության թիվը 1418 մարդ

Ավարտված նախագիծը ներկայացվում է պատվիրատուին ստորև ներկայացվող քանակություններով՝

Գիրք	Անվանում	Բովանդակություն	Քանակ	
			Հայերեն	Ռուսերեն
Գիրք-1	Բացատրական մաս	Բացատրագիր, հաշվարկներ, վերլուծություններ, բնապահպանական ռիսկերի նվազեցման միջոցառումների նկարագրություններ, ելակետային տվյալներ, Ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվություն), նախագծման առաջադրանք և այլն	6	1
Գիրք-2*	Գծագրական մաս	Աշխատանքային գծագրեր (ջրամատակարարման համակարգի սխեմա, գլխավոր հատակագիծ, ուղեգծերի հատակագծեր, երկայնական և լայնական կտրվածքներ, կառույցների և հանգույցների կոնստրուկտիվ լուծումներ, բարեկարգում): Տեղանքի հանույթներ (ուղեգծի հանույթ՝ Մ 1:1000, տարածքի հանույթ՝ Մ 1:500) , երկրաբանական հետազոտություն, տարածքի ուղղաձիգ հատակագծում: Չափագրական գծագրեր (հատակագծեր, կտրվածքներ, ներառել լուսանկարներ): Նախագծվող կառույցների հատակագծեր, կտրվածքներ, հատույթներ, հանգույցներ և այլն Մ 1-100, Մ 1-50, Մ 1-20: Կոնստրուկտիվ տարրերի գծագրեր, մանրամասն և հավաք մասնագրեր և այլն:	6	1
Գիրք-3	Աշխատանքային ծավալների ամփոփագիր	Աշխատանքային ծավալների մանրամասն նկարագրումով, ծավալների քանակներով, միավոր և ընդհանրական գների դատարկ սյունակներով: 1.Ծավալաթերթ-նախահաշիվ, նշելով բոլոր ներառված աշխատանքների ծավալները և միավոր գները, ներառյալ բոլոր աննուղակի ծախսերը, բացի շահույթից և ԱԱՀ-ից: Շահույթը և ԱԱՀ-ն կիռարել ծավալաթերթ-նախահաշվի վերջում: 2.Մրցութային ծավալաթերթ՝ նույն ծավալաթերթ-նախահաշիվը առանց տողերի միավոր արժեքների, նշելով միայն յուրաքանչյուր գլխի կշիռը(%) ծավալաթերթի նկատմամբ:	6	1
Գիրք-4	Աշխատանքի կազմակերպում	Աշխատանքի կազմակերպման տեխնոլոգիական հիմնական պրոցեսների նկարագրությամբ, անհրաժեշտ մարդկային և մեքենա-մեխանիզմների քանակի գնահատմամբ, հիմնական աշխատանքի իրականացման օրացուցային գրաֆիկի կազմման, հենանիշերի աղյուսակներ, համաձայնեցումներ, օգտագործվող նյութերի և սարքավորումների տեխնիկական մասնագրեր ու նկարագրություններ և այլն:	6	1
Գիրք-5	Նախահաշիվներ	Մանրամասն ըստ օբյեկտների նախահաշիվների կազմում՝ ☐ Ըստ գործող նորմերի	1	1

*Գիրք-2-ում հայերեն և ռուսերեն տարբերակները կարող են համատեղվել

Նախագծային փաստաթղթերի մշակման արդյունքում նախագծողը պետք է ներկայացնի նաև՝

- շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,
- Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,
- Աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

- Նախագծային փաստաթղթերը պատվիրատուին հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային (AutoCAD, Word, Excel և PDF) տարբերակներով)

Նախագծի համաձայնեցումը

- Նախագծային լուծումները , ներառյալ աշխատանքային ծավալները, համաձայնեցնել համայնքի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հետ նախագծման ընթացքում նվազագույնը երկու անգամ:
- Նախագիծը համաձայնեցնել ինժեներական ցանցերը շահագործող և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ, ինչպես նաև այլ պետական լիազոր մարմինների (Շրջակա միջավայրի նախարարության, ԱԻՆ և այլն) հետ ըստ անհրաժեշտության:

Այլ պահանջներ

- Նախագծման ընթացքում, նախագծման առաջադրանքում կարող են մտցվել մասնակի փոփոխություններ և ճշտումներ:
- Նախագիծը փորձաքննության ներկայացնում է պատվիրատուն:
- Նախագծային փաստաթղթերը կընդունվեն պատվիրատուի կողմից միայն բոլոր անհրաժեշտ համաձայնեցումների և փորձաքննությունների դրական եզրակացության առկայության դեպքում:
- Նախագիծը պետք է համապատասխանի նախագծման առաջադրանքին ու ՀՀ տարածքում գործող շինարարական նախագծման նորմերին և կանոններին:
- Նախագծային փաստաթղթերը պետք է կազմվեն ՀՀ տարածքում գործող աշխատանքային գծագրերին ներկայացվող ստանդարտներին համապատասխան:
- Նախագծողի կողմից շինարարության սկզբի պահին պետք է կատարվի կառույցի նշահարումը և հանձնվի կապալառուին:

Նորմատիվ վկայակոչումներ

ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշում «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»:

ՍՆիՊ 2.04.02-84* Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառույցներ:

ՍՆիՊ 3.05.04-85* Ջրամատակարարման և կոյուղու արտաքին ցանցեր և կառուցվածքներ:

ՄՍՊ 4.01-101-2000 Ջրամատակարարման և կոյուղու համակարգերի պոլիմերային նյութերից խողովակաշարերի նախագծում և մոնտաժում. Ընդհանուր պահանջներ:

ՀՀՇՆ I-2.01-99 Ինժեներական հետազոտություններ շինարարության համար. Հիմնական դրույթներ:

ԳՕՍՏ 21.604-82 ՆՓՀՇ. Ջրամատակարարում և կոյուղի. Արտաքին ցանցեր. Աշխատանքային գծագրեր:

Բացի նշվածներից նաև օրենքով տվյալ գործունեությունը կարգավորող այլ օրենսդրական ու նորմատիվ փաստաթղթեր:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	ՋԻՆՋ ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Չոլակյան փող., տ. 38
ՀՎՀՀ՝00846441	ՀՎՀՀ՝ 02511015
Հ/Հ՝ 900018007519	Հ/հ՝ 217004044111001
Կենտրոնական գանձապետարան	Բանկ՝ էյչ-էս-Բի-Սի բանկ Հայաստան ՓԲԸ
Գործադիր տնօրեն	Տնօրեն
Արթուր Սողոմոնյան	Էդուարդ Մելքոնյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2
«08» 05 2020թ. կնքված
ՋՆՏ-ԽՄԲ-ԾՁԲ-2020/17/19 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/13	**Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում**	...	...	...	8,136,000	8,136,000	8,136,000	8,136,000	8,136,000	8,136,000	8,136,000	8,136,000	8,136,000	**8,136,000**
3	71241200/16	**Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում**	...	...	...	1,644,000	1,644,000	1,644,000	1,644,000	1,644,000	1,644,000	1,644,000	1,644,000	1,644,000	**1,644,000**

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝ 00846441
Հ/Հ՝ 900018007519
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Արթուր Աղոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

ՋԻՆՋ ՍՊԸ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Չոլակյան փող., տ. 38
ՀՎՀՀ՝ 02511015
Հ/հ՝ 217004044111001
Բանկ՝ էյչ-էս-Բի-Սի բանկ Հայաստան ՓԲԸ
Տնօրեն
Էդուարդ Մեսրոպյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված 3
« » _____ 2020թ. կնքված
***ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/17/19** ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » _____ 2020թ. կնքված
***ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/17/19** ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 4
«08» 05 2020թ. կնքված
ՋՆԵ-ԽԲՄ-ԵՁԲ-2020/17/19 ծածկագրով պայմանագրի

Աշխատանքներին ներգրավված մասնագետների ցանկ

Չափանբաժին 1-ին՝

Հ/հ	**Հիմնական** աշխատակազմում ներառված մասնագետների	
	անունը, ազգանունը	պաշտոնը
1	2	3
1.	Էդուարդ Մեսրոպյան	Թիմի ղեկավար
2.	Ահարոն Դավթյան	Ջրամատակարարման գլխավոր մասնագետ
3.	Վահան Կորեյան	Ջրամատակարարման մասնագետ
Հ/հ	**Ոչ հիմնական** աշխատակազմում ներառված մասնագետների	
	անունը, ազգանունը	պաշտոնը
1	2	3
1.	Ֆիրդուսի Ավետիսյան	երկրաբան
2.	Համլետ Խալաթյան	գեոդեզիստ
3.	Կարեն Մեսրոպյան	նախահաշվորդ

Չափանբաժին 3-րդ՝

Հ/հ	**Հիմնական** աշխատակազմում ներառված մասնագետների	
	անունը, ազգանունը	պաշտոնը
1	2	3
1.	Էդուարդ Մեսրոպյան	Թիմի ղեկավար
2.	Տաթևիկ Մելոյան	Ջրամատակարարման գլխավոր մասնագետ
3.	Ռենա Բաղալովա	Ջրամատակարարման մասնագետ
Հ/հ	**Ոչ հիմնական** աշխատակազմում ներառված մասնագետների	
	անունը, ազգանունը	պաշտոնը
1	2	3
1.	Ֆիրդուսի Ավետիսյան	երկրաբան
2.	Համլետ Խալաթյան	գեոդեզիստ
3.	Կարեն Մեսրոպյան	նախահաշվորդ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31

ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018007519
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

ՋԻՆՋ ՍՊԸ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Չոլակյան փող., տ. 38
ՀՎՀՀ՝ 02511015
Հ/հ՝ 217004044111001
Բանկ էյ-Էյ-Բի-Սի բանկ Հայաստան ՓԲԸ
Տնօրեն
Էդուարդ Մեսրոպյան

/ստորագրություն/
Կ.Տ